



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՍԽ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ ՇԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. ՅԵՐԿԱՆՅԱՆ

ԿԵՐԻ ԺԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

== Յ Ե Վ ==

Ս Ե Ր Մ Ս Տ Ա Ն Ա Լ Ը

=====

Դ Ե Տ Գ Դ Ս 1930 Յ Ե Ր Ե Վ Ա Ն


ՀԱՅԿ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ. ՀԱՆՐԱՄԱՏՋԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. ՅԵՐԿԱՆՅԱՆ

ԿԵՐԻ ԺԼԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

== Յ Ե Վ ==

Ս Ե Ր Մ Ս Տ Ա Ն Ա Լ Ը



Դ Ե Տ Գ Ր Ա Տ 1930 Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Հրատ. № 1372

Գրառեալ № 5478 (բ) Պատ. № 795 Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան, Յերեանում.

ԿԵՐԻ ԶԱԿՆԴԵՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կերի ճակնդեղի և ընդհանրապես արմատապատուղների մեծ մասի մշակությունը գյուղատնտեսության համար ունի խոշոր տնտեսական նշանակութիւն: Հիմնականում կերի ճակնդեղը խոշոր ազդակ է հանդիսանում կաթնատնտեսական անասնապահության զարգացմանը, իսկ մյուս կողմից արմատապատուղների մշակությունը հնարավորութիւն է տալիս լեռնային և նախալեռնային շրջաններում յերկրագործութիւնը ավելի ռացիոնալ ձևերով տանելու:

Ճակնդեղը կաթնատու կովերի համար հանդիսանում է, փորպես լավագույն կեր: Կերի ճակնդեղը փորպես հյութալից կեր ձմեռը փորոշ չափով փոխարինում է կանաչ խոտին, նա փոշ միայն ավելացնում է կո-

վի կաթնատվությունը, այլև լավ ազդեցություն ե ունենում կաթի վորակի վրա:

Ճակնդեղի մշակությունը հնարավորություն ե տալիս խոտի խոշոր խնայողութուն ունենալ: Լավ բերք ստանալու դեպքում նաև եժանացնում ե անասունների կերը:

Բացի այն վոր ճակնդեղը կաթնատնտեսության զարգացման համար խոշոր նշանակություն ունի, նա և հնարավորություն ե տալիս հիմնական կերպով բարեփոխելու տնտեսության վարելու ձևը, վորը վերաբերում ե հողի ավելի ռացիոնալ և արդյունավետ ձևով ոգտագործելուն:

Մեր գյուղացին փորձից արդեն գիտի ճակնդեղի տված ոգուտը, բայց դեռևս նրա մշակությունը յաին ծավալ չի ստացել: Ճակնդեղը մեզ մոտ գլխավորապես մշակվում ե փոքր տարածությունների վրա բանջարանոցներում և պարտեզներում. մինչդեռ մեր մի շարք շրջաններում, ինչպես՝

Լենինականի, Լոռու-Փամբակի Սևանի և այլ գավառներում ճակնդեղը կարող ե մշակվել զաշտում և հետևապես սնտեսու-թյանը տալ մեծ քանակությամբ անասու-ների կեր: Արմատապտուղների զաշտում մշակելը հնարավորություն կստեղծի մարց-նելու սերմնափոխություն և կազմելու կա-նոնավոր բաղամայա ցանքսաշրջանառու-թյուն:

Խնչ առավելություններ ունի ճակնդեղի և ընդհանրապես արմատապտուղների և կարտոֆիլի մշակությունը հողի լավացման տեսակետից:

1. Ճակնդեղի մշակության շնորհիվ հողի վերին շերտը հարստանում ե սննդարար նյութերով և ճակնդեղից հետո նույն տե-ղում ցանվող ցորենի ցանքսը տալիս ե ա-վելի առատ բերք: Դրա պատճառը հետև-յալն ե.

ա. Շնորհիվ այն հանգամանքի, վոր ար-մատապտուղների համար հողն ավելի խորն

ե մշակվում և վերի շերտը շարունակ փր-
րացվում մու մուլախոտերը վոջնչացվում են —
հողի ֆիզիքական հատկությունը լավանում
ե և մնում ե փուխը դրությամբ, վորը
նույնպես շատ կարևոր ե ճակնդեղից հետո
մշակվող հացահատիկների համար:

բ. Դարձյալ շնորհիվ հողի լավ մշակու-
թյան ողն ավելի ազատ ներս ե թափան-
ցում հողի մեջ և նպաստում ե այնտեղ
յեղած ոգտակար միկրոօրնների գործունեու-
թյանը, վոր շատ կարևոր ե հողի պարար-
տացման և լավացման տեսակետից:

Յեւնելով վերև ասածներից մենք գալիս
ենք այն յեղրակացության, վոր ճակնդեղի
մշակությամբ զբաղվելը շատ կարևոր ե
մանավանդ մեր լեռնային գոտու անասնա-
պահական շրջաններում, վորտեղ և պետք
ե աշխատել ընդարձակել նրա մշակությունը:
Ճակնդեղի մշակությանը ամենից առաջ
իրենց դաշտերում խոշոր տեղ պետք ե տան
կողլեկտիվ տնտեսությունները, վորոնք ար-

դէն անցնում են կանոնավոր ցանքսաշրջա-
նառութեան կիրառման:

Աշխատող ձեռքերի ավելի ռացիոնալ
ձևով ոգտագործմամբ կուեկտիվ տնտեսու-
թյունները հնարավորութեան ունեն այն-
պես դասավորել իրենց անդամների աշխա-
տանքը, փոր ճակնդեղի մշակութեան պա-
հանջփող աշխատանքները չեն անդրադառնալ
գյուղատնտեսութեան մեջ սեզոնային բնույթ
կրող այլ աշխատանքների վրա:

ՇՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Կերի ճակնդեղը, ինչպես և առհասարակ
բոլոր արմատապտուղ բույսերը, սիրում ե
փութիւր, խոր և լավ մշակված հող, թեթե
սեահողը առանձնապես նպաստավոր ե ճա-
կնդեղի մշակութեան համար:

Ճակնդեղի համար հատկացրած հողը
սովորաբար գութանով վարում են աշնանը
և ըստ հնարավորին խորը, փորովհետե վոր-
քան խորն ե վարած լինում հողը, այնքան

ճակնդեղի արմատը լավ ե գարգանում և հետևապես լավ բերք տալիս:

Աշնանը վարած հողը չեն փոցխում, այլ այնպես կոշտերով թողնում են մինչև գարուն: Ձմրան սառնամանիքի և ձյան ազդեցության տակ հողի կոշտերը փխրանում են և գարնանը հեշտությամբ մշակվում ճակնդեղի համար: Բացի այդ աշնանը վարած հողը ավելի մեծ քանակությամբ իր մեջ ամբարում ե ջրի պաշար:

Բացի հողի լավ մշակելուց անհրաժեշտ ե նաև գոմաղբով պարարտացնել, վորով ճակնդեղի բերքատվությունը կբարձրանա և բացի այդ կստացվի լավորակ ճակնդեղ: Մեկ հեկտար տարածության հողամասը պարարտացնելու համար կպահանջվի 40-50 սայլ գոմաղբ: Գոմաղբը դաշտ են դուրս տանում աշնանը կամ վաղ գարնանը: Գոմաղբով պարարտացումը նշանակություն ունի վոչ միայն ճակնդեղի համար, այլև նա լավ ազդեցություն ե ունենում ճակըն-

դեղից հետո մշակվող հացահատիկի ցանք-
սի վրա էս:

Աշնանը դաշտ դուրս բերած գոմաղբը
սփռում են հողի յերեսին և գութանով վա-
րելիս լավ խառնում հողի հետ:

Աշնանը վարած հողը, վաղ դարձնան կըր-
կին անգամ թեթև վարում են յերկ-խոփա-
նի գութանով կամ չթով և ապա յերկա-
թյան փոցխով մեկ կամ յերկու յերես
խնամքով տափանում, փխրացնում:

ՑԱՆՔՍԸ

Ճակնդեղը ցանում են միայն այն ժա-
մանակ, յերբ հողը լավ մշակված ու խնամ-
քով տափանված է:

Ճակնդեղի սերմը կամ ուղղակի ցանում
են արդեն մշակված ու պատրաստած դաշ-
տում և կամ նախապես սածիլանոց են
պատրաստում, սածիլ (շիթիլ) ստանալու
համար և ապա սածիլները այնտեղից փո-
խադրում են ու տնկում իսկական տեղում:

Սակայն յերբ մեծ տարածությամբ ե ճակընդեղ ցանվում, այն ժամանակ հնարավոր չի լինում մեծ քանակությամբ սածիլներ պատրաստել, ուստի ուղղակի ցանում են դաշտում:

Ցանքսը անպայման պետք ե կատարել շարքերով: Շարքացանքսը կատարում են կամ շարքացան մեքենայով կամ ձեռքով տնկելով: Շարքերի հեռավորությունը միմիանցից անում են 52—55 սանտիմետր (մոտ 12 վերշոկ): Շարքերը պետք ե լինեն ուղիղ և հավասար հեռավորությամբ. այս կարևոր ե նրա համար, վորպեսզի շարքերի մեջ յեղած տարածությունը հեշտությամբ մշակվի և հնարավոր լինի ձեռքի և ձիու կուլտիվատորներ բանեցնելու: Ուղիղ շարքեր անցկացնելու համար, ցանելուց առաջ մարկյոր գործիքով արտի յերեսին անց են կացնում ակոսներ—գծեր: Նախ քան մարկյորով գծեր քաշելը, հողը լավ հավառարեցնում ու կոշտերը մաքրում են, վոր-

պեսզի մարկյորի անկացրած գծերի հետքը նշմարելի լինեն: Մարկյորի աստամները միմիանցից հեռու յեն այնքան, ինչ հեռավորության վրա պետք է լինեն շարքերը:

Մարկյորով քաշած աղոս-գծերի վրա կատարվում է ճակնդեղի ցանքսը թե մեքենայով և թե ձեռքով, ինչպես և սածիլների անկելը:

Մեքենայով ցանելիս հողը պետք է լինի լավ փխրացրած և հարթ ու հավասար: Մեծ տարածություն ցանելիս ոգտվում են սովորական շարքացան մեքենայով, իսկ փոքր տարածության համար ձեռքի մեքենայով: Սովորական շարքացան մեքենայով ցանելիս անցքերի մի մասը փակում են և խողովակները հանում այնպես, փոր մնացած խողովակների հեռավորությունը միմիանցից, համապատասխանեն ցանվելիք ճակնդեղի շարքերի հեռավորության: Այս մեքենան բանեցվում է ձիու ուժով:

Ամենից լավ համարվում է «Պլանետ»

կոչված ձեռքի շարքացան մեքենան, վորը աշխատեցնում է մեկ բանվոր, առանց ձիու: «Պլանետով» ցանելիս մեքենան, տընեցնող բանվորը քշում է այնպես, վոր շարքացանի առաջին սնիվն անցնում է մարկյորի անցկացրած ալոս-գծի վրայով:

Ցանքսի ամենալավ ձևը սակայն պետք է համարել ձեռքով կատարվող ցանքսը բերում: Բնային ձևով կատարվող ցանքսը կատարվում է հետևյալ կերպ. վերը նկարագրած յեղանակով անցկացրած ալոս-գծերի վրա միմիանցից վորոշ հեռավորությամբ փայտյա բիզերով փոսիկներ են անում և յուրաքանչյուրի մեջ 3—4 սերմ գցում ու հողով ծածկում: Այս վերջին ձևը գերադասելի յե նրա համար, վոր նախ շատ քիչ սերմ է պահանջում և յերկրորդ սերմերը դյուրությամբ և շուտ են ծլում ու հողից դուրս գալիս: Պարզ է վոր բնային ձևով ցանելիս ավելի շատ բանվորական ձ' ոք կպահանջվի, բայց պետք է ինկատի

ուհեհնար, վոր այս աշխատանքը շատ թեթև աշխատանք է և հեշտությամբ կարող են կատարել կանայք և յերեխաները:

Սերմը ցանվում է 3—5 սանտիմետր խորությամբ, վորը կախված է տեղական պայմաններից, յեթե հողը փափուկ է և փուխը, այն ժամանակ ցանում են ավելի խորը, իսկ ծանր կավային հողերում ավելի յերես:

Ճակնդեղի սերմերի ծլեցնելը արագացնելու համար ցանելուց 1-2 ուր առաջ սերմերը թրջում են և տալս նախքան ցանելը փռում են, վոր մի քիչ ցամաքեն, վորպեսզի ցանելիս սերմերն իրար չկպչեն:

Մեկ հեկտար տարածություն շարքացան մեքենայով ցանելու համար կպահանջվի 20-25 կիլո սերմ, իսկ ձեռքով բնային ձեվով տնկելիս 4 և կես—5 և կես կիլո:

Ճակնդեղը ցանում են այն ժամանակ, յերբ հողը բավականաչափ տաքացած է լինում, մոտավորապես գարնան հացաբույսերի ցանքսը վերջանալուց հետո:

ՃԱԿՆԴԵՂԻ ՍԱԾԻԼՆԵՐՈՎ ՏՆԿԵԼԸ

Ինչպէս վերին ասացինք, ճակնդեղը մշակվում է նաև նախորոք սածիլներ (շիթիլներ) պատրաստելով: Ծակնդեղի սածիլներ ստանալու համար վաղ դարնան, պարտեզում կամ տան մոտիկ լավ մշակված ու պարարտ հողամասի վրա կազմակերպում են սածիլանոց (շիթիլանոց): Մեկ հեկտար ճակնդեղի ցանքսի համար վերցնում են մոտ 2 կիլո սերմ և ցանում 200-300 քառ. մետր տարածութիւն բռնող սածիլանոցում: Ցանքսը սածիլանոցում կատարվում է շարքով: Շարքերի միջին տարածութիւնը թողնում են 8-12 սանտիմետր: Ցանում են վոչ շատ խիտ, այնպես վոր սերմերը միմիանցից 2 սանտիմետր հեռու լինեն:

Սածիլների ծիլերն յերևալուց մշտական հսկողութիւն են ունենում—յերեվացող մոլախոտերը քաղհանում, շարքերի միջին տարածութիւնը փխրացնում և կարիք յեղած դեպքում ջրում:

Սածիլները դաշտ են տեղափոխւում այն
 ժամանակ, յերբ բույսերի վրա արդեն կան
 5-8 տերեւ, իսկ արմատներն ունեն սազի
 փետուրի հաստութիւնն:

Սածիլանոցից սածիլները հանելուց մի
 քանի ժամ առաջ ջրում են, վորպեսզի բույ-
 սերը հեշտությամբ դուրս հանվեն: Դուրս
 հանված սածիլները դարսում են կողովի մեջ
 ու տանում դաշտ տնկելու: Իհարկէ դաշ-
 տում հողը նախորոք պատրաստած պետք է
 լինի: Սածիլը տնկում են շարքերում: Շար-
 քերի հեռավորութիւնը միմիանցից լինելու
 յէ 52-50 սանտիմետր: Շարքերը նույնպէս
 նախորոք մարկյորով քաշված պետք է լի-
 նեն: Սրածայր փայտով շարքի ուղղության
 բացում են փոսեր, վորը ցնցուղով նախ
 ջրում են, ապա տնկում սածիլը ու հողով
 ամրացնում կողքերքից, վերպեսզի արմատ-
 ները լավ կպչեն հողին: Յէթե հողը բավա-
 կանաչափ խոնավ է, տնկելուց առաջ ջրե-
 լու կարիք չի զգացվի:

Սածիլները փոխադրման և տնկելու համար աշխատում են ընտրել ամպամած որ:

Ի՞նչ առավելութիւն ունի ճակնդեղի սածիլներով տնկելը:

Նախ սերմերի մեծ խնայողութիւնն է լինում, սածիլներով տնկելիս 6-10 անգամ քիչ սերմ է գնում քան յերբ ուղղակի դաշտումն է ցանվում:

Յերկրորդ.—ճակնդեղի աճեցողութիւնը ավելի յերկար է լինում, վորովհետև սածիլ ստանալու համար ցանվում է սովորական ձևով ցանելուց 2 շաբաթ առաջ:

Յերրորդ.—ճակնդեղի ցանքսի համար աշնանը չպատրաստած հողամասը հնարավոր է լինում մշակել ու պատրաստել գարնանը, մինչև սածիլների տնկելը:

ՃԱԿՆԴԵՂԻ ԲՈՒՅՍԻ ՇԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ

Ճակնդեղի ցանքսի հետագա խնամքը կայանում է նրանում, վոր հողը շարունակ պահպանվի փուխը վիճակում և մոլախոտե-

ըրն իր ժամանակին մաքրվեն — քաղհանվեն։
Բույսի անման ընթացքում յեթե հողը չը-
փուխրացվի, բուզը չտրվի ու մուխոտերը
չմաքրվեն, ճակնդեղը չի աճի, գլուխ չի
տալ, հետևապես և վատ բերք կստացվի։

Առաջին քաղհանը կատարում են այն ժա-
մանակ, յերբ ցանած ճակնդեղի ծիլերն ար-
դեն դուրս են յեկել։ Քաղհանը կարելի յե կա-
տարել և ձեռքի հողուրագներով և թե ձեռ-
քի կուլտիվատորով — պլանետով։ Քաղհանե-
լով միաժամանակ և հողը կեղևահատվում
ու փուխրացվում եւ Շատ կարևոր ե, վոր
առաջին քաղհանը կատարվի վորքան կարե-
լի յե շուտ, առանց ժամանակն անցնելու,
հակառակ դեպքում մուխոտերն արագորեն
աճելով ու զարգանալով կխեղտեն ճակնդե-
ղի մատղաշ ծիլերը կամ տեկած սածիլները
և այնուհետև շատ դժվար կլինի մուխո-
տերը փոշնչացնել։

Յերբ ցանած ճակնդեղի բույսը բավակա-
նաչափ աճում է և տալիս ե միջանի տերև,

ՀԱՅԿԱՍՏԱՆԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

այն ժամանակ սկսում են նոսրացնել ցանք-
սը, այսինքն պոկում են ճակնդեղի ավե-
լորդ համարվող թույլ բույսերը: Ճակնդեղի
տունկերի նոսրացումը չպետք է ուշացնել:
Յեթե այդ նոսրացումը չկատարվի, այն
ժամանակ մեծ քանակությամբ տերևներ
կստացվեն և կկազմեն փարթամ սաղարթ,
մինչդեռ արմատները կմնան մանր ու չզար-
գացած, հետևապես և վատ բերք կստացվի:

Յեթե ճակնդեղի ծիլերը առողջ են և նը-
րանց վրա վորևե մնասատու կամ հիվան-
դություն չի նկատվում, նոսրացման ժա-
մանակ հեռացնում են բոլոր մանր ու վը-
տիտ ծիլերը և թողնում խոշոր ու լավ զար-
գացածները: Թողած բույսերը շարքերում
միմիանցից հեռու պետք է լինեն 22—30
սանտիմետր, իսկ յեթե ծիլերը դեռևս լավ
զարգացած չեն և անհուսալի յեն, նոսրաց-
նելիս թողնում են սկզբում ավելի մեծ քա-
նակությամբ տունկեր միմյանցից 12—18
սանտիմետր հեռավորությամբ: Հետագայում,

յերբ սրանք ել բաժականաչափ մեծանում ու զարգանում են, այն ժամանակ ավելորդները պոկում են: Ընդհանրապես վորպես կանոն պետք է ընդունել, վոր վորքան հողը պարարտ է և լավ մշակված, այնքան ավելի նոսր կարելի լի թողնել տունկերը միմյանցից, և ընդհակառակը ուժասպառ և աղքատ հողերում տունկերն ավելի խիտ պետք է լինեն:

Ճակնդեղի նոսրացումից հետո ևս պետք է հետևել, վորպեսզի մոլախոտերը չզարգանան:

Ամսվա ընթացքում կարիք կլինի քաղհանել 2—3 անգամ:

Այստեղ պետք է հիշատակել, վոր քաղհանած մոլախոտերը յերբեք չպետք է թողնել քաղհանած տեղում, այլ անպայման պետք է հեռացնել այդտեղից և թափել աղբակույտի մեջ:

Ճակնդեղի տունկերը քաղհանից ու նոսրացումից հետո սկսում են արագորեն ա-

ճել ու զարգանալ: Ահա այդ ժամանակվանից սկսում են և «բուզը տալ», այսինքն հողի վորոշ քանակություն լցնում են տունկի ստորին մասը: Սակայն պետք է իմանալ, վոր բուզը տալը պետք է կատարվի զգուշությամբ, սկզբում քիչ, իսկ յերկրորդ և յերրորդ անգամ ավելի շատ են հող լըցնում տունկի շուրջը: Բուզ տալը կատարվում է սովորաբար քաղհանից հետո: Բուզ տալու համար գործածում են ձիու կուլտիվատոր կամ բզատու գործիքով:

ԲԵՐՔԻ ՇԱՎԱՔԸ

Մոտավորապես հոկտեմբեր ամսին ճակնդեղը հասնում է, այսինքն նրա արմատն այնքան է մեծանում ու հաստանում, վոր կարելի չե արդեն գետնից հանել: Ճակնդեղի հասունանալը կարելի չե վորոշել արտաքինից, յերբ տերևները սկսում են դեղնել կամ բաց գույն ստանալ, իսկ ցածրի տերևները թեքվում են գետնին:

Ճակնդեղը հավաքում են դեռևս աշնան
ցրտահարություններից առաջ: Ամենից ա-
ռաջ հավաքում են ճակնդեղի այն արմատ-
ները, վորոնք սաստիկ դուրս յեկած են լի-
նում դեռնից, վորովհետև այդպիսիները աշ-
նան առաջին: Կրտահարությունից վնասվում
են և շուտ փչանում: Այնուհետև հողից հա-
նում են մնացած ճակնդեղները:

Հողից հանելուց հետո ճակնդեղի վրայից
մարրում են հողն ու ցեխը, տերևները
կտրատում և ապա բուրգի նման կույտեր
կազմում: Այդ դրությամբ խորհուրդ է տրը-
վում թողնել մի յերկու օր, վորպեսզի ճա-
կնդեղի արտաքին խոնավությունը պակա-
սի: Յեթե ճակնդեղը թաց դրությամբ դարս-
վում է նկուղում կամ հորում շուտով փը-
չանում է: Ընդհանրապես պետք է աշխա-
տել հավաքել տաք-արև օրերին, յերբեք
չթողնելով ցուրտ և անձրև յեղանակներին:

Ճակնդեղի վրայից կտրտած տերևները
տալիս են անասուններին վորպես կեր:

Ձմեռը ճակնդեղը շատ հաջող կերպով
կարելի լե պահել հաստուկ պատրաստած վոչ
խորը հողափոսերում: Հողափոսը անպայման
պետք ե լինի պատրաստած չոր տեղում:
Հողափոսի լայնութիւնը լինում ե մոտ 3
մետր, իսկ յերկարութիւնը կախված կլինի
ճակնդեղի քանակից: Ճակնդեղը դարսելուց
առաջ հողափոսի հատակին ու կողքերին
ծղնոտ են փռում և վրան դարսում ճակն-
դեղի արմատները, վորի տերեւները, ինչպես
վերեն ասացինք, կտրտված են ու մաքրը-
ված: Վնասված ու կտրատված ճակնդեղ-
ները չպետք ե դարսել: Պատերի կողմն ըն-
կնող ճակնդեղները դարսվում են կանոնա-
վոր կերպով, այն ձևով, վոր արմատների
գլխի կողմը (տերեւների) ուղղված լինեն
դեպի ներս: Ճակնդեղի շարվածքը հատակի
կողմում լայն ե լինում և քանի բարձրա-
նում ե—նեղանում և ընդունում ե բուրդի
կամ կտուրի ձև: Ճակնդեղի կույտը հողի յե-
րեսից $\frac{3}{4}$ —1 մետր բարձր ե լինում: Շար-

ված կույտի մեջտեղը ամբացնում են փայտի խողովակ դանցքի համար: Այդ խողովակի ստորին ծայրը հասնում է հողափոսի հատակին (մի քիչ բարձր) իսկ վերինը դուրս է գալիս կույտի վերին կողմը: Կանոնավոր կերպով ճակնդեղի կույտը շարելուց և ուղանցքի խողովակը դնելուց հետո կույտի յերեսը չոր հողի հաստ շերտով ծածկում են և բահով սղնդացնում:

Ճակնդեղի կույտին կտուրի ձև է տրվում այն դիտավորությամբ, անձրևը և ձյան ջուրը չմնա և չծծվի կույտի ներսը, այլ կողքերից հոսի ցած, հակառակ դեպքում ճակնդեղը կխոնավանա ու կփչանա:

Այս ձևով կարելի չէ ամբողջ ձմեռվա ընթացքում պահել մինչև 10 տոնն (մոտ 600 վուլթ) ճակնդեղ:

Մեկ հեկտար ճակնդեղի ցանքսից ստացվում է մոտ 300—400 ցենտներ բերք, իսկ կանոնավոր և լավ մշակության դեպքում մինչև 650 ցենտներ և ավելի:

Գոյութիւնն ունեն կերի ճակնդեղի շատ տեսակներ, բայց դրանցից Հայաստանի պայմաններում տարածված են և հաջող կերպով աճում են մամմում, եկկենդորֆ և կիսաշաքարային տեսակները:

ՃԱԿՆԴԵՂԻ ՍԵՐՍԵՐԸ ՍՏԱՆԱԼԸ

Անասնապահության զարգացման հետ զուգընթաց կերի ճակնդեղի մշակութիւնը ևս տարեց-տարի գնալով ընդարձակվում է: Այդ կուլտուրայի մշակությամբ առավել ևս զբաղվում են անասնապահական խորհրդային և կոլլեկտիվ տնտեսութիւնները: Դրա հետեանքով ճակնդեղի սերմի պահանջը ավելի ու ավելի մեծանում է և հաճախ հընարավոր չի լինում լիովին բավարարելու յեղած պահանջը վորովհետեւ ճակնդեղի սերմը մինչև հիմա ստացվում է դրսից և այն ել սահմանափակ քանակությամբ և բավականին բարձր գներով,

Այս հանդամանքը դրդում է մտածել այսուհետև հենց մեզ մոտ պատրաստելու պահանջվող ճակնդեղի սերմացուն, փորը առանձին գժվարությունների հետ չի կապված և միանդամայն հնարավոր է:

ԻՆՉՊԵՍ ՍՅԱՆԱԼ ՃԱԿՆԴԵՂԻ ՍԵՐՍԸ

Կերի ճակնդեղը, ինչպես և մյուս արմատապտուղ բույսերը (գազար, շաղկամ, տուրնեպս և այլն) յերկամյա բույս է, այսինքն իր աճման առաջին տարին տալիս է աերեսեր և զարգանում ու խոշորանում է արմատը, փորը իր մեջ ամբարում է սննդաբար նյութեր: Յերկրորդ տարին նա տալիս է ցողուն, ծաղկում է և սերմ տալիս:

Սերմ ստանալու համար, աշնանը, բերքահավաքի ժամանակ ընտրում և առանձնացնում են ճակնդեղի լավ զարգացած ու խոշոր արմատները: Սերմացվի համար ջուկվող արմատները, բացի այդ, իրենց գույնով, արտաքին ձևով և այլ նշաններով սլիաի հա-

մասշտաբախառն են այն տեսակին, վորպիսին ցանկանում են ստանալ: Զոկած ճակնդեղի արմատները պետք է լինեն նաև միանգամայն առողջ, անվնաս և գլխի վերին մասում փոսեր չպետք է ունենան:

Հարկավոր քանակության ճակնդեղի արմատներ ջրկելուց հետո դանակով կտրում են բոլոր տերևները թողնելով միայն տերևակոթերի մի փոքրիկ մասը:

Սերմացու ճակնդեղը ձմեռը պահում են կամ հողափոսերում այն ձևով, ինչպես վերը նկարագրեցինք սովորական ճակնդեղի պահպանումը և կամ չոր, հով և լավ ոդափոխվող նկուղներում: Հասկանալի պետք է լինի, վոր սերմացու ստանալու համար պահվող ճակնդեղի խնամքը ավելի լավ պետք է լինի, վորպեսզի մինչև գարուն արմատները անվնաս մնան և ցրտահարության չենթարկվեն:

Սերմացու ճակնդեղը այնպես պետք է դարսել, վոր միմյանց կալած չլինեն, այլ

նրանց միջև վորոշ տարածություն պետք
 և թողնել Սյդպես անում են նրա համար,
 վորպեսզի յեթե վորեւեւ ճակնդեղ փթի կամ
 հիվանդանա, չփթեցնի նաև հարեան ար-
 մատները: Ծակնդեղը դասավորում են հե-
 տեյալ ձևով.— առաջին շերտը շարելիս, դըր-
 սի շարք ճակնդեղների արմատները ուղղ-
 ված են լինում դեպի ներս, իսկ մեջ տե-
 դում շարում են խառն միայն արանքնե-
 րում վորոշ տարածություն թողնելով: Սյ-
 նունհետև այս առաջին շերտի վրա հող են
 լցնում ու վրան դարսում յերկրորդ շարքը
 նույն ձևով և այլն: Պետք է ասել, վոր կա-
 րիք չկա շատ հաստ շերտ կազմելու, վոր-
 պեսզի կույտի ներսում տաքություն չա-
 ռաջանա և չփչանա արմատները:

Ինչպիսի յեղանակով, վոր սլահվի սերմա-
 ցու ճակնդեղը պետք է հետևել, վոր ջեր-
 մությունը $1\frac{1}{2}$ —1 աստիճանից բարձր չլի-
 նի, վորովհետև տաք նկուղում ճակնդեղը
 կսկսի ծլել և վերջը կփչանա:

Այս ձևով սերմացու ճակնդեղը պահվում է մինչև վարնան տնկելը Գարնանը հացաբույսերի ցանքսի սկսելու հետ միաժամանակ տնկում են նաև սերմացու ճակնդեղի արմատները:

Սերմացու ճակնդեղների տնկելու համար հատկացրած հողամասը պետք է հերկված լինի աշնանից և այն ել բավականին խորը (30—35 սանտիմետր): Տեղը պետք է լինի արևոտ և հեռու շինությունների ու ծառերի շվաքից:

Զափազանց պարարտ հող ցանկալի չէ սերմացու ճակնդեղի համար և վոչ ել հողը պարարտացրած պետք է լինի ճակնդեղի տնկելուց անմիջապես առաջ: Պարարտ հողը ուժեղ սնունդ ստանալով ճակնդեղն իրենից արձակում է բազմաթիվ ծաղկաբեր տերևներ, բայց այդ դեպքում ստացվում են մանր սերմեր: Բացի այդ պարարտ հողում սերմի հասունանալը չափազանց յերկարում է և հաճախ ստացվում են չհասած ու վատ ծըլանակ սերմեր:

Տնկելուց առաջ մի անգամ ևս թեթև կերպով վարում են հողը, տափանում ու ապա տնկում սերմացու ճակնդեղը: Նախքան տնկելը պետք է ուշադրությամբ ստուգել բոլոր արմատները և սերմացվի համար ջոկել միայն առողջ ու անվնաս մնացած արմատները, իսկ անպետքները կարելի չէ տալ անասուններին ուտելու:

Ճակնդեղները տնկում են 70 սանտիմետր իրարից հեռու հավասար շարքերում նույն տարածությունը պետք է թողնել նաև տունիկերի միջև միևնույն շարքերում:

Ճակնդեղները տնկում են բահով բացած փոսերում: Սովորաբար միքիչ ավելի խորն են տնկում, քան յեղել են իրենց բսած տեղում: Տնկելուց հետո ճակնդեղի հողից դուրս մնացած մասը ծածկում են հողի բարակ շերտով (1—3 սանտիմետր), վորպեսզի պաշտպանված լինեն գարնան ցրտահարումից:

Պահեստում թողնում են վորոշ քանակու-

Թյամբ ճակնդեղ, վորպեսզի տնկած ճակընդեղների մի մասի փթելու կամ փնասելու դեպքում, փոխարենը, տնկվեն նորերը:

Տնկած ճակնդեղի հետագա խնամքը կայանում է հողը մոլախոտերից շարունակ մաքուր պահելում, փխրացնելում և բուզը տալում:

Ծաղկաբեր ցողունները կտրվելուց և քամուց փնասվելուց պաշտպանվելու համար տնկում են փայտե ցիցեր ու յրանցից կապում ցողունները:

Տնկված ճակնդեղից բավականին յերկար ժամանակվա ընթացքում դուրս են գալիս բազմաթիվ ցողուններ, վորը ախքան ել ցանկալի չեն, վորովհետև դրանից առաջանում է այն վոր սերմերը միաժամանակ չեն հասնում, իսկ ստացված սերմն ել մանրը է լինում: Խոշոր և լավ վորակի սերմ ստանալու համար պետք է թողնել քիչ քանակությամբ ցողուններ (3—6) իսկ մնացածները կտրել հենց արմատի մոտից: Ցողուն-

ների շատ կամ քիչ թողնելը կախված է ճակնդեղի խոշորությունից, տնկած սերմացու ճակնդեղը վորքան խոշոր լինի, այնքան շատ ցողուն կարելի լե թողնել և ընդհակառակը, մանր ճակնդեղների վրա թողնում են միայն 3—4 ցողուն: Յեթե ավելորդ ցողունների կտրելուց հետո դուրս են գալիս նորերը, նրանք ևս պետք է կտրվեն: Միայն պետք է աշխատել ավելորդ ցողունները կտրել ծաղկելուց բավական ժամանակ առաջ:

Բացի ավելորդ ցողուններից ցանկալի յե կտրել նաև ճակնդեղի վերին մասից ու կողքերից դուրս յեկող ճյուղերը:

Յեթե այս բոլորը լրիվ կատարվում է և այն ել իր ժամանակին, այն ժամանակ բոլոր սերմերը միաժամանակ կհասունանան և կլինեն խոշոր ու լավ վորակի:

Ճակնդեղի սերմնաբուծությամբ զբաղվող կուտնատեսությունները կամ անհատ տնտեսությունները միևնույն հողամասում չպետք

ե տնկեն տարբեր տեսակի ճակնդեղներ,
ինչպես որինակ՝ մամուռ, եկկենդորֆ և
այլն, վորովհետև իրար մոտ տնկած զանա-
զան տեսակի ճակնդեղների ծաղկման ժա-
մանակ կարող են խաչաձև բեղմնավորում
առաջ գալ, վորի հետևանքով կստացվեն
խառն, վոչ միատեսակ սերմեր:

Ընդհանրապես փոքր տնտեսությունների
համար ավելի լավ է զբաղվել միայն մի
տեսակի ճակնդեղի սերմնաբուծությամբ:
Իսկ տարբեր տեսակի ճակնդեղների սեր-
մեր ստանալու գործով կարող են զբաղվել
միայն խոշոր խորհրդային կամ կոլեկտիվ
տնտեսությունները:

Ճակնդեղի սերմերի քաղն սկսվում է
հենց, վոր նրանք հասնում են, բայց քանի
վոր սովորաբար բոլոր սերմերը միանգամից
չեն հասնում, այդ պատճառով հավաքում
են յերկու նվազում: Սկզբում կտրում են
բոլոր հասած ցողունները և առկա մնացած-
ները, յերբ նրանք ել կհասունանան:

Ինկատի պետք է ունենալ, վոր հասած սերմերը մի փոքրիկ ցնցումից սկսում են թափվել, այդ պատճառով, յերբ սերմերն արդեն հասնում են, առանց ժամանակ կորցնելու պետք է հավաքել և այն ել շատ զգուշ, վորպեսզի սերմերի կորուստ չլինեն:

Յերբեմն սերմերը հենց վոր սկսում են հասնել, հողից դուրս են հանում ամբողջ ճակնդեղը, դնում են արևի տակ մինչև վոր սերմերը բոլորովին հասնում են, վորից հետո վրայից հավաքում են, վոր անձրևի տակ չմնան ու չփչանան:

Հասած սերմերը կալսում են սովորական կալում, կամ ծեծում թակիչներով, ինչպես ասում են Ռուսաստանում: Ճակնդեղի սերմերը շատ հեշտությամբ են ծեծվում:

Ծեծելուց հետո ճակնդեղի սերմերը քամհարով քամում են: Բայց նախքան քամելը, ձեռքով կամ ձեռքի փոցխով հեռացնում են ցողունների խոշոր կտորաանքը, վորից հետո

անց են կացնում սովորական քամհարի կամ
զտիչի միջոցով:

Ճակնդեղի մաքրած սերմը անպայման
պետք է խնամքով չորացնել, ապա լցնել
նեղ պարկերի մեջ ու կախ տալ առաստա-
ղից. իսկ յեթե կախելու հարմարություն
չկա, պատկերը պետք է դարսել չոր պա-
հեստում կամ նկուղում:

Սերմերի լավ պահելը խիստ կարևոր է,
վորպեսզի ծլունակությունը պահպանվի,
իսկ ծլունակությունը շատ հեշտությամբ
կորչում է, յեթե սերմը լավ չի չորացրած
և պահելու է տեղն էլ խոնավ է: Միաժամա-
նակ պետք է վոր պահեստը, վորտեղ գըտ-
նըվում է ճակնդեղի սերմը ապահով լինի
մկներից:

Այս ձևով ճակնդեղի սերմը պահվում է
մինչև ցանքսը: Լավ պահված ճանդեղի սեր-
մը իր ծլունակությունը պահպանում է
2—4 տարի:


Ցանելուց 20—25 օր առաջ անհրաժեշտ

և անպայման վորոշել ճակնդեղի սերմի ծր-
լունակությունը, վորի համար նմուշներ
պետք է վերցնել տարբեր պարկերից և ա-
ռանձին-առանձին վորոշել ծլունակությունը:
Ծլունակությունը վորոշելու համար կարե-
լի յէ վերցնել ավագով կամ հողով լցրած
փոքրիկ հասարակ արկղ, վորի վրա փայտի
ձողով բացում են 100 հատ փոսիկներ, այդ
փոսիկների մեջ շարում են նույն քանա-
կության ճակնդեղի սերմ: Արկղի հողը շա-
րունակ խոնավ պետք է լինի: 3—4 որից
հետո կսկսեն յերևալ ծիլերը: Յեթե 6—7
որվա ընթացքում ծլած սերմերի քանակը
5-ից պակաս չէ, ապա այդպիսի սերմը ցա-
նելու համար պետք է համարել պիտանի:


Սերմ ստանալու համար տնկած յուրա-
քանչյուր ճակնդեղից ստացվում է մոտ
150—200 դրամ սերմ: Մեկ հեկտար ճակն-
դեղի ցանքսը սերմով ապահովելու համար,
աշնանը վորպես սերմացու պետք է ջուկել
150—200 ճակնդեղ:

Մեկ հեկտար հողամասի վրա տնկում են մոտ 20 000 հատ սերմացու ճակնդեղ: Կահոնավոր և խնամքով աշխատանք տանելով այդ տարածության սերմնաբուծական տրնկարանից կտացվի 12—16 ցենտներ սերմ (72—90 փութ):

Այն կուլեկտիվ և խորհրդային տրնտեսությունները վորոնց կլիմայական և հողային հնարավորությունները թույլ են տալիս, առաջինը պետք է զբաղվեն կերի ճակնդեղի սերմնաբուծությամբ, նպատակ ունենալով բավարարելու վոչ միայն իրենց տնտեսության կարիքը, այլև վորոշ քանակությամբ սերմ վաճառելու, նկատի ունենալով, վոր այդ գործը տնտեսությանը կտա զգալի նյութական ոգուտ:




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038177

528-10845

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. ՄԱՍ. (ՅԵ)



23177-60 m 3



ՅՐԿԱՆՅԱՆ

Культура кормовой свеклы и получение семян

Госиздат ССР Армении
Эривань—1930